



Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2006թ. առաջին կիսամյակում /վերլուծություն/

2006թ. առաջին կիսամյակում հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 60560 գործարքներ, որոնց քանակը 2005թ. առաջին կիսամյակի համեմատ աճել է 10.3%-ով, իսկ 2005թ. երկրորդ կիսամյակի համեմատ նվազել՝ 10.5%-ով:

2006թ. առաջին կիսամյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2006թ. առաջին կիսամյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2006թ. առաջին կիսամյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 23638 օտարման գործարքների 86.9%-ը կազմել են առուվաճառքները, 12.2%-ը՝ նվիրատվությունները և 0.9%-ը՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 37.7%-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 37.7%-ը հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարաններ:

2006թ. առաջին կիսամյակում, 2005թ. առաջին կիսամյակի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակն աճել է 4.5%-ով, իսկ 2005թ. երկրորդ կիսամյակի համեմատ՝ 17.9%-ով: 2006թ. առաջին կիսամյակում Երևան քաղաքում անշարժ գույքի 7387 առուվաճառքի գործարքների 63.3%-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում, 2005թ. առաջին կիսամյակի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը աճել է 6.3%-ով, իսկ 2005թ. երկրորդ կիսամյակի համեմատ նվազել՝ 2.0%-ով:

2006թ. առաջին կիսամյակում Երևան քաղաքում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով հետևյալ շուկայական միջինացված գները և դրանց փոփոխման միջակայքերը.

Համայնքներ	Նվազագույն և առավելագույն գները 2006թ. առաջին կիսամյակում /դրամ/	Միջին գները /դրամ/		
		առաջին կիսամյակ 2005թ.	առաջին կիսամյակ 2006թ.	երկրորդ կիսամյակ 2005թ.
Կենտրոն	157500-540100	265600	361300	311800
Արաբկիր	112500-405100	217600	283600	252600
Քանաքեռ-Զեյթուն	90000-270100	133000	172100	154300
Նոր-Նորք	90000-225100	121000	160900	148800
Ավան	99000-180000	114400	142800	131100
Էրեբունի	90000-225100	107000	140600	130400
Շենգավիթ	90000-202500	129600	172400	157800
Դավթաշեն	97700-225100	134400	176900	159400
Աջափնյակ	90000-225100	126800	161500	149900
Մալաթիա-Մեքաստիա	90000-202500	123800	158300	144900
Նուբարաշեն	58500-135000	56600	102700	82300
Միջինը Երևանում /բացի Նորք-Մարաշից/	58500-540100	139100	184800	165800

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2006թ. առաջին կիսամյակում, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1 քմ մակերեսի շուկայական միջին գները 2005թ. երկրորդ կիսամյակի համեմատ աճել են 11.5%, իսկ 2005թ. առաջին կիսամյակի համեմատ աճել են՝ 32.9%:

2006թ. առաջին կիսամյակում Երևանում իրականացված բազմաբնակարան շենքերի բնակարանների օտարման և առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների շարժն ունի աճի միտում:

2006թ. առաջին կիսամյակում մարզերում, բացառությամբ Երևանը, վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 2567 բնակարաններ, որոնց քանակը 2005թ. առաջին կիսամյակի համեմատ աճել է 9.6%-ով, իսկ 2005թ. երկրորդ կիսամյակի համեմատ նվազել՝ 5.5%-ով:

2006թ. առաջին կիսամյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի

շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով հետևյալ շուկայական միջինացված գները և դրանց փոփոխման միջակայքերը.

Մարզեր	Քաղաքներ	Նվազագույն և առավելագույն գները 2006թ. առաջին կիսամյակում /դրամ/	Միջին գները /դրամ/		
			առաջին կիսամյակ 2005թ.	առաջին կիսամյակ 2006թ.	երկրորդ կիսամյակ 2005թ.
Արագածոտն	Աշտարակ	36000-75500	40500	56900	49100
	Ապարան	13500-39500	19500	24900	22400
	Թալին	11300-42200	17700	23000	21400
Արարատ	Արտաշատ	24800-66600	32500	43700	38200
	Մասիս	36000-71100	35700	53200	49800
	Վեդի	22500-46600	20500	36700	32300
	Արարատ	20300-53300	23200	38800	35700
Արմավիր	Վաղարշապատ	49500-111000	62400	77300	73000
	Արմավիր	27000-66600	37400	49500	43500
	Մեծամոր	18000-48900	18800	31800	24100
Գեղարքունիք	Սևան	18000-44400	20200	32400	29300
	Գավառ	13500-40000	17300	24000	21400
	Մարտունի	22500-67500	19500	37700	35100
	Վարդենիս	9000-37800	9800	19700	18600
	Ճամբարակ	5900-31100	8900	12400	10300
Լոռի	Վանաձոր	27000-88800	33900	45100	39800
	Ստեփանավան	15800-42200	19300	23600	22100
	Սպիտակ	18000-48900	22700	30600	25800
	Ալավերդի	9000-35500	13900	19600	17700
	Տաշիր	11300-33300	15300	19700	19700
	Թումանյան	4100-11300	5100	5300	5300
	Շամլուղ	2300-8300	2800	2800	2800
	Ախթալա	6800-16000	10400	10400	10400
Կոտայք	Աբովյան	57700-111000	61200	86000	75900
	Նոր Հաճն	40500-75500	42100	58800	54900
	Բյուրեղավան	22500-57700	28200	40500	35100
	Եղվարդ	31500-66600	33900	53800	46300
	Հրազդան	20300-48900	25700	34400	28000
	Օաղկաձոր	18000-88800	48100	68000	55200
	Չարենցավան	24800-48900	25300	38000	34600
Շիրակ	Գյումրի	27000-88800	37900	46100	41500
	Արթիկ	15800-42200	17600	28300	24900
	Մարալիկ	8100-35500	14700	21400	21300
Սյունիք	Գորիս	22200-66600	27100	49400	43600
	Կապան	22500-46600	21600	38100	31200
	Միսիան	18000-48900	21200	31000	26700
	Մեղրի	13500-42200	15900	25200	21900
	Ագարակ	9000-31100	13900	18800	17500
	Քաջարան	9000-40000	10900	23100	16700
	Դաստակերտ	4500-11300	6400	6400	6400
Վայոց Ձոր	Վայք	13500-48900	21700	32400	28700
	Եղեգնաձոր	24800-66600	31500	49500	41100
	Ջերմուկ	36000-88800	34600	57000	44500
Տավուշ	Դիլիջան	18000-57700	25700	39000	32600
	Իջևան	27000-72000	30800	47200	37100
	Բերդ	18000-45000	20900	28100	25400
	Նոյեմբերյան	9000-22500	12800	15300	14100

2006թ. առաջին կիսամյակում հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1 քմ մակերեսի շուկայական միջին գները 2005թ. երկրորդ կիսամյակի համեմատ աճել են 15.4%, իսկ 2005թ. առաջին կիսամյակի համեմատ աճել են՝ 45.5%:

2006թ. առաջին կիսամյակում հանրապետությունում բազմաբնակարան շենքերի բնակարանների օտարման և առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակի ամսական փոփոխման շարժն ունի աճի միտում:

2006թ. առաջին կիսամյակում հանրապետությունում արձանագրվել են անհատական բնակելի տների 2569 առուվաճառքների գործարքներ, այդ թվում Երևանում՝ 593, մյուս մարզերում միասին վերցրած՝ 1976: 2005թ. առաջին կիսամյակի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակն աճել է 13.7%-ով, ընդ որում Երևան քաղաքում նվազել է 0.8%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած՝ աճել 18.9%-ով: 2005թ. երկրորդ կիսամյակի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 8.9%-ով, ընդ որում Երևանում՝ 16.2%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած՝ 6.4%-ով:

2006թ. առաջին կիսամյակում Երևան քաղաքի համայնքներում շինության 250.0 քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը, և դրանց փոփոխման միջակայքերը.

Համայնքներ	Նվազագույն և առավելագույն գները 2006թ. առաջին կիսամյակում /դրամ/	Միջին գները /դրամ/		
		առաջին կիսամյակ 2005թ.	առաջին կիսամյակ 2006թ.	երկրորդ կիսամյակ 2005թ.
Կենտրոն	135000-900200	280200	373500	332300
Արաբկիր	90000-450100	222500	291200	266300
Քանաքեռ-Զեյթուն	67500-270100	135000	175000	159100
Նորք-Մարաշ	90000-450100	169300	184000	180900
Ավան	90000-360100	116400	146300	136700
Էրեբունի	67500-225100	108600	144500	135600
Շենգավիթ	67500-202500	131500	175200	161700
Դավթաշեն	90000-405100	137800	179500	164400
Աջափնյակ	67500-270100	129300	164100	155600
Մալաթիա-Սեբաստիա	67500-405100	126400	161300	148600
Նուբարաշեն	40500-135000	58400	104700	87500
Միջինը Երևանում /բացի Նոր-Նորքից/	40500-900200	146900	190800	175300

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2006թ. առաջին կիսամյակում անհատական բնակելի տների շինության 1 քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/ 2005թ. երկրորդ կիսամյակի համեմատ աճել են 8.8%, իսկ 2005թ. առաջին կիսամյակի համեմատ աճել են՝ 29.9%:

2006թ. առաջին կիսամյակում Երևան քաղաքում իրականացված անհատական բնակելի տների օտարման և առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների շարժն ունի աճի միտում:

2006թ. առաջին կիսամյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0 քմ և տնամերձի 1000.0 քմ միջին մակերեսներով անհատական

բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/ և դրանց փոփոխման միջակայքերը.

Մարզեր	Քաղաքներ	Նվազագույն և առավելագույն գները 2006թ. առաջին կիսամյակում /դրամ/	Միջին գները /դրամ/		
			առաջին կիսամյակ 2005թ.	առաջին կիսամյակ 2006թ.	երկրորդ կիսամյակ 2005թ.
Արագածոտն	Աշտարակ	27000-81000	44100	59800	50400
	Ապարան	13500-36000	20300	26400	23900
	Թալին	13500-36000	18600	24300	23000
Արարատ	Արտաշատ	22500-62200	33300	45100	39400
	Մասիս	25000-62200	36500	54300	51200
	Վեդի	22500-48900	23100	37800	33500
	Արարատ	22500-53300	24300	39900	37000
Արմավիր	Վաղարշապատ	36000-111000	63200	78500	74300
	Արմավիր	22500-67500	38100	50800	45200
Գեղարքունիք	Սևան	18000-53300	21700	37600	33000
	Գավառ	9000-37800	19200	25400	22900
	Մարտունի	22200-53300	21200	39100	37300
	Վարդենիս	9000-31500	11500	21500	20800
	Ճամբարակ	4500-24400	10800	13900	11700
Լոռի	Վանաձոր	23200-92800	35200	46400	41000
	Ստեփանավան	13500-40000	25200	26800	26800
	Սպիտակ	17800-44400	23800	32100	27300
	Այվերդի	9000-31500	15200	21100	18900
	Տաշիր	9000-31500	16500	21100	21000
	Թումանյան	4500-18000	6200	6800	6700
	Շամլուղ	2300-13500	4000	4200	4200
	Ախթալա	9000-22500	11100	11900	11900
Կոտայք	Աբովյան	31500-111000	62000	87800	79300
	Նոր Հաճն	22200-76500	43400	60000	56500
	Բյուրեղավան	22200-66600	28900	41700	36400
	Եղվարդ	22500-71100	34700	54800	48700
	Հրազդան	18000-53300	27600	35700	30200
	Ծաղկաձոր	36000-112500	51500	69100	56800
	Չարենցավան	18000-57700	26700	39100	37200
Շիրակ	Գյումրի	28200-93800	43200	47700	43800
	Արթիկ	13300-40500	18500	29700	27000
	Մարալիկ	13500-40000	15400	23300	23300
Սյունիք	Գորիս	18000-79900	27900	50700	44700
	Կապան	17800-66600	22600	39000	33300
	Սիսիան	17800-44400	21600	32200	28100
	Մեղրի	13500-40000	16900	26500	23400
	Ագարակ	13300-36000	15000	20600	19600
	Դաստակերտ	4500-18000	7600	8500	8500
Վայոց Ձոր	Վայք	17800-44400	22900	33800	30100
	Եղեգնաձոր	22200-71100	32300	50800	43600
	Ջերմուկ	17800-48900	24600	34300	30400
Տավուշ	Դիլիջան	26600-66600	30000	39900	34200
	Իջևան	22200-66600	31600	47900	38500
	Բերդ	13500-44400	21700	29300	26400
	Նոյեմբերյան	9000-31500	14400	16300	14900

2006թ. առաջին կիսամյակում հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1 քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/ 2005թ. երկրորդ կիսամյակի համեմատ աճել են 11.3%, իսկ 2005թ. առաջին կիսամյակի համեմատ աճել են՝ 41.2%:

2006թ. առաջին կիսամյակում հանրապետության մարզերում իրականացված անհատական բնակելի տների օտարման և առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների շարժն ունի աճի միտում:

Ընդհանուր առմամբ, 2006թ. առաջին կիսամյակում հանրապետությունում օտարվել են 8763 միավոր /13763.18 հա/ հողեր, որից Երևանում՝ 1099 միավոր /430.73 հա/, այդ թվում ՀՀ հողային օրենսգրքի փոփոխության 23-րդ հոդվածի համաձայն, օտարվել են 737 միավոր /407.81 հա/ հողեր, որից Երևանում՝ 496 միավոր /351.73 հա/: Օտարված հողերը ըստ նպատակային նշանակության բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 4149 միավոր /12937.02 հա/: Երևանում գյուղատնտեսական նշանակության հողերի օտարման գործարքներ չեն գրանցվել,
- բնակելի կառուցապատման հողեր՝ 3086 միավոր /310.91 հա/, որից Երևանում՝ 563 միավոր /69.38 հա/,
- հասարակական կառուցապատման հողեր՝ 1224 միավոր /240.08 հա/, որից Երևանում՝ 398 միավոր /162.58 հա/,
- արդյունաբերական օբյեկտների հողեր՝ 242 միավոր /248.39 հա/, որից Երևանում՝ 138 միավոր /198.77 հա/,
- հատուկ պահպանվող տարածքի հողեր՝ 60 միավոր /15.79 հա/: Երևանում հատուկ պահպանվող տարածքի հողերի օտարման գործարքներ չեն գրանցվել,
- ջրային հողեր՝ 2 միավորի /11.00 հա: Երևանում ջրային հողերի օտարման գործարքներ չեն գրանցվել:

2006թ. առաջին կիսամյակում հանրապետությունում օտարված հողերից 8221 միավորի /13538.80 հա/ նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից Երևանում՝ 1049 միավոր /426.38 հա/, նվիրատվության գործարքներ՝ 472 միավոր /196.52 հա/, որից Երևանում՝ 31 միավոր /2.86 հա/ և փոխանակության գործարքներ՝ 70 միավոր /27.86 հա/, որից Երևանում՝ 19 միավոր /1.49 հա/:

Հանրապետությունում 2006թ. առաջին կիսամյակում, 2005թ. առաջին կիսամյակի համեմատությամբ, հողերի առուվաճառքի գործարքների քանակական աճը կազմել է 24.4%: Ընդ որում գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 1.8%-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ՝ աճել է 56.6%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ՝ աճել է շուրջ 10 անգամ, հատուկ պահպանվող տարածքի հողերի նկատմամբ՝ 58 գործարքով և ջրային հողերի նկատմամբ՝ 2 գործարքով: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արմավիրի մարզում՝ 9121.24 հա, որից 9084.86 հա գյուղատնտեսական նշանակության են: Վաճառված հողերի քանակի 33.8%-ը կամ 2775 գործարքներ /7554.02 հա/ հանդիսացել են պետական կամ համայնքային սեփականության հողեր, որից Երևանում՝ 559 միավոր /359.74 հա/, իսկ 66.2%-ը կամ 5446 միավորը /5984.78 հա/ հանդիսացել են մասնավոր սեփականության հողեր, որից Երևանում՝ 490 միավոր /66.64 հա/:

Ստորև ներկայացվում է 2006թ. առաջին կիսամյակում պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն ըստ մարզերի, որտեղ ներառված չեն հատուկ պահպանվող տարածքների և ջրային հողերը.

ՄԱՐԶԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող								Մասնավոր սեփականություն հանդիսացող							
	Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողերի		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի						բնակելի կառուցապատ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Միավոր	Մակերես /հա/	Միավոր	Մակերես /հա/	Միավոր	Մակերես /հա/	Միավոր	Մակերես /հա/	Միավոր	Մակերես /հա/	Միավոր	Մակերես /հա/	Միավոր	Մակերես /հա/	Միավոր	Մակերես /հա/
Երևան	0	0.00	132	197.41	125	25.27	302	137.06	0	0.00	4	0.93	396	40.72	90	24.99
Արագածոտն	213	1280.98	4	1.42	18	2.19	40	1.80	258	237.35	3	0.07	216	21.97	13	2.31
Արարատ	129	318.78	19	3.79	133	12.42	115	7.12	628	371.97	3	0.83	411	36.70	9	0.13
Արմավիր	391	4767.39	5	1.46	12	1.17	71	1.53	758	4317.47	1	0.01	321	29.68	36	2.54
Գեղարքունիք	2	3.50	1	0.20	42	4.17	50	5.85	78	8.86	0	0.00	72	8.43	11	2.75
Լոռի	6	11.38	5	1.66	0	0.00	38	12.81	89	84.40	1	0.20	36	4.09	21	0.24
Կոտայք	173	466.31	35	32.16	132	13.09	107	20.64	644	285.67	6	1.51	682	68.45	22	5.47
Շիրակ	14	13.41	4	2.32	110	3.57	109	3.13	97	110.85	1	0.14	30	4.02	5	0.05
Սյունիք	0	0.00	10	3.30	2	0.24	56	2.89	88	98.73	1	0.05	12	1.11	12	0.50
Վայոց Ձոր	21	130.92	3	0.35	0	0.00	72	3.75	63	58.36	0	0.00	29	3.64	4	0.50
Տավուշ	14	33.53	2	0.15	8	1.10	29	2.08	208	68.11	0	0.00	47	3.86	1	0.06
Ընդամենը	963	7026.20	220	244.22	582	63.22	989	198.66	2911	5641.8	20	3.74	2252	222.67	224	39.54

Ստորև ներկայացվում է 2006թ. առաջին կիսամյակում պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունը ըստ մարզերի և հողերի տեսակների, բացառությամբ հատուկ պահպանվող տարածքների և ջրային հողերի.

ՄԱՐԶԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Ուղղակի վաճառք								Աճուրդ վաճառք									
	Ընդամենը		Արդյունաբերական օբյեկտների հողերի		Բնակավայրերի հողեր				Ընդամենը		Գյուղ. նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողերի		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի								բնակելի կառուցապատ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Միավոր	Մակերես /հա/	Միավոր	Մակերես /հա/	Միավոր	Մակերես /հա/	Միավոր	Մակերես /հա/	Միավոր	Մակերես /հա/	Միավոր	Մակերես /հա/	Միավոր	Մակերես /հա/	Միավոր	Մակերես /հա/		
Երևան	502	352.44	132	197.41	79	21.29	291	133.74	57	7.29	0	0.00	0	0.00	46	3.98	11	3.31
Արագածոտն	12	0.05	0	0.00	0	0.00	12	0.05	263	1286.34	213	1280.98	4	1.42	18	2.19	28	1.75
Արարատ	64	3.66	10	1.04	1	0.33	53	2.29	332	338.45	129	318.78	9	2.75	132	12.09	62	4.83
Արմավիր	0	0	0	0.00	0	0.00	0	0.00	479	4771.55	391	4767.39	5	1.46	12	1.17	71	1.53
Գեղարքունիք	9	1.21	0	0.00	0	0.00	9	1.21	86	12.51	2	3.5	1	0.2	42	4.17	41	4.64
Լոռի	33	12.37	5	1.66	28	10.71	0	0.00	16	13.48	6	11.38	0	0.0	0	0.00	10	2.10
Կոտայք	47	31.45	30	30.16	0	0.00	17	1.29	399	500.61	172	466.17	5	2	132	13.09	90	19.35
Շիրակ	7	0.24	0	0.00	1	0.05	6	0.19	230	22.2	14	13.41	4	2.32	109	3.53	103	2.94
Սյունիք	32	4.47	7	2.88	0	0.00	25	1.59	36	1.98	0	0.00	3	0.43	2	0.24	31	1.31
Վայոց Ձոր	24	2.74	3	0.35	0	0.00	21	2.39	69	129.14	18	127.77	0	0.00	0	0.00	51	1.37
Տավուշ	31	2.78	2	0.15	5	0.86	24	1.76	22	34.08	14	33.53	0	0.00	3	0.24	5	0.31
Ընդամենը	761	411.41	189	233.65	114	33.24	458	144.51	1989	7117.63	959	7022.91	31	10.58	496	40.7	503	43.44

Հանրապետությունում 2006թ. առաջին կիսամյակում արձանագրվել են նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ընդլայնման նպատակով՝ ուղղակի վաճառքի 4 գործարքներ /3.29 հա ընդհանուր մակերեսով/:

Հանրապետությունում 2006թ. առաջին կիսամյակում, 2005թ. առաջին կիսամյակի համեմատությամբ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակական աճը կազմել է 12.4%: Ընդ որում Երևանում նվազել է 37.4%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած աճել է 15.1%-ով: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 28.8%-ով, բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի

նկատմամբ՝ աճել է շուրջ 70.0%-ով, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ՝ աճել է 3.7 անգամ, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ՝ աճել է 2.4 անգամ, հատուկ պահպանվող տարածքի հողերի նկատմամբ՝ աճել է 18 գործարքով և ջրային հողերի նկատմամբ՝ աճել է 2 գործարքով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2006թ. առաջին կիսամյակում գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	153	319.56	4.4	6630.2	512.1	176	149.03	362.2	6772.5	2148.6
Ապարան						9	13.03	90.6	767.6	304.1
Թալին	60	961.42	33.7	825.8	127.6	64	66.52	90.6	758.5	292.1
Ծաղկահովիտ						5	7.82	77.0	948.2	140.1
Արարատի մարզ										
Արտաշատ	50	70.93	47.3	5966.9	913.7	290	227.61	335.1	5418.0	1130.1
Մասիս	39	138.54	11.0	1419.5	589.6	101	39.16	181.1	6772.5	1492.1
Վեդի	40	109.31	25.2	366.8	108.4	226	101.87	203.8	4515.0	917.3
Արմավիրի մարզ										
Արմավիր	51	324.32	2.3	1789.1	662.2	158	165.48	294.3	4063.5	730.9
Բաղրամյան	219	3408.80	6.3	244.1	52.5	217	3384.78	90.6	677.3	452.6
Վաղարշապատ	121	1034.27	2.3	1113.0	280.6	371	743.14	443.7	9030.0	1254.6
Գեղարքունիքի մարզ										
Գավառ						14	4.66	190.2	496.7	310.6
Ճամբարակ	2	3.50	175.5	264.9	220.2	21	18.13	45.3	541.8	123.4
Մարտունի						14	4.49	45.3	1806.0	441.2
Սևան						1	0.44	45.3	451.5	174.2
Վարդենիս						25	51.20	27.2	532.8	188.7
Լոռու մարզ										
Ալավերդի						20	16.90	163.0	2483.3	334.4
Գուգարք	1	0.38	368.0	368.0	368.0	8	4.19	226.4	2709.0	857.9
Սպիտակ						3	1.40	226.4	1490.0	470.7
Ստեփանավան	5	11.00	94.7	431.3	290.4	44	49.48	90.6	2257.5	309.6
Տաշիր						7	10.22	45.3	451.5	185.6
Կոտայքի մարզ										
Աբովյան	74	102.90	36.0	854.2	315.7	262	80.72	271.7	11287.5	2849.1
Եղվարդ	25	128.42	48.4	2019.8	580.5	326	182.11	172.1	11287.5	1970.3
Հրազդան	73	234.85	45.2	841.6	313.5	52	21.15	113.2	2709.0	684.0
Շիրակի մարզ										
Ախուրյան	1	2.90	229.3	229.3	229.3	33	35.88	249.0	1693.1	379.5
Ամասիա						13	27.97	36.2	237.0	93.9
Անի	3	5.51	279.9	282.2	281.3	12	9.08	108.7	361.2	194.2
Աշոցք						18	20.91	45.3	112.9	99.8
Արթիկ	10	5.00	43.0	832.4	336.0	21	17.01	63.4	1083.6	153.9
Սյունիքի մարզ										
Գորիս						23	26.28	90.6	673.3	286.2
Կապան						3	2.55	54.3	841.6	207.8

Մերի						7	1.57	181.1	1784.2	407.3
Սիսիան						55	68.32	45.3	631.2	170.5
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	12	123.57	35.9	305.5	118.7	40	40.11	117.7	2524.8	1171.0
Վայք	6	4.20	35.9	719.6	146.7	21	17.54	54.3	1430.7	457.8
Տավուշի մարզ										
Բերդ						87	22.13	45.3	841.6	307.8
Իջևան	7	4.08	81.3	600.0	387.0	6	1.75	240.0	1683.2	745.1
Նոյեմբերյան	7	29.45	207.0	1315.0	774.2	115	44.23	45.3	3509.5	421.6

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման մեծ միջակայքը կապված է հողերի տեղադրությունից և հողատեսքերից:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2006թ. առաջին կիսամյակում բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	15	17489.0	73.6	2375.4	443.4	208	209795.0	113.2	3612.0	1936.9
Ապարան						2	2360.0	113.2	632.1	158.4
Թալին	3	4404.0	116.7	117.8	117.3	2	3360.0	45.3	361.2	68.0
Ծաղկահովիտ						1	30.0	45.3	361.2	63.6
Արարատի մարզ										
Արտաշատ	61	62785.0	143.7	1499.0	408.9	92	95033.0	135.8	2709.0	709.1
Մասիս	53	40117.0	193.8	664.8	559.2	213	165483.0	135.8	9030.0	916.8
Վեդի	18	18000.0	122.0	130.4	124.1	104	104993.0	113.2	993.3	516.2
Արմավիրի մարզ										
Արմավիր	9	8700.0	142.2	277.7	245.5	100	98989.0	135.8	2257.5	885.5
Բաղրամյան						3	3600.0	81.5	270.9	108.8
Վաղարշապատ	3	3000.0	632.0	632.0	632.0	212	188337.0	135.8	4515.0	1193.7
Գեղարքունիքի մարզ										
Գավառ	24	16100.0	88.0	1749.6	230.2	10	13616.0	135.8	903.0	302.5
Ճամբարակ	16	24000.0	47.5	145.2	102.3	4	4560.0	45.3	135.5	72.5
Մարտունի						37	40415.0	90.6	451.5	173.1
Սևան	2	1600.0	340.9	684.2	512.5	4	3210.0	90.6	903.0	117.7
Վարդենիս						17	22493.0	45.3	225.8	79.1
Լոռու մարզ										
Այվերդի						5	8490.0	67.9	270.9	95.5
Գուգարք						12	9530.0	67.9	2347.8	486.3
Մայիտակ						7	8130.0	63.4	451.5	99.6
Ստեփանավան						10	13421.0	45.3	270.9	76.8
Տաշիր						1	230.0	45.3	135.5	61.1
Կոտայքի մարզ										
Աբովյան	78	73305.0	407.4	4523.5	1393.0	321	313581.0	135.8	6772.5	1429.3
Եղվարդ	33	38434.0	162.0	2374.9	1127.3	319	328471.0	135.8	6772.5	1600.8
Հրազդան	21	19195.0	74.5	695.3	305.7	40	40668.0	135.8	9030.0	1015.9
Շիրակի մարզ										
Ախուրյան	79	21705.8	450.5	2701.5	1346.6	12	11986.0	113.2	1535.1	262.5

Ամսախա								45.3	135.5	61.1
Անի	1	800.0	40.6	40.6	40.6	5	8330.0	67.9	180.6	83.9
Աշոցք						1	5370.0	40.8	135.5	54.3
Արթիկ	29	12746.0	56.8	2200.8	353.6	12	14481.5	67.9	925.6	122.0
Սյունիքի մարզ										
Գորիս						4	3975.0	67.9	541.8	201.9
Կապան	2	2400.0	805.9	1666.9	1235.3			67.9	632.1	185.6
Մեղրի						5	2870.0	67.9	406.4	104.3
Սիսիան						3	4250.0	67.9	406.4	117.7
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր						25	28517.0	67.9	1128.8	220.5
Վայք						3	6100.0	77.0	632.1	101.8
Տավուշի մարզ										
Բերդ						1	1320.0	45.3	632.1	76.9
Իջևան	2	1500.0	289.8	289.8	289.8	38	30936.0	67.9	1354.5	321.0
Նոյեմբերյան	1	900.0	291.2	291.2	291.2	6	5605.0	45.3	632.1	99.8

2006թ. առաջին կիսամյակում հանրապետությունում հողերի նկատմամբ գրանցվել են անհատույց սեփականաշնորհման 2 գործարքներ 1.00 հա մակերեսով /Գեղարքունիքի մարզ/:

2006թ. առաջին կիսամյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 4207 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 6.9%: Ընդ որում, վարձակալության գործարքների 34.5%-ն իրականացվել են իրավաբանական անձանց կողմից:

2006թ. առաջին կիսամյակում 2005թ. առաջին կիսամյակի համեմատ, անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը նվազել է 27.0%-ով, իսկ 2005թ. երկրորդ կիսամյակի համեմատ՝ 32.0%-ով:

2006թ. առաջին կիսամյակում հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 296 բնակարանների, 135 անհատական բնակելի տների, 1366 հասարակական, 234 արտադրական նշանակության օբյեկտների, 2149 միավոր /15460.0 հա/ հողերի, 26 ավտոտնակների և 1 այգետնակի վարձակալության գործարքներ:

2006թ. առաջին կիսամյակում Երևան քաղաքում պետական սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 117 վարձակալության գործարքների քանակը 2005թ. առաջին կիսամյակի համեմատ նվազել է 35.7%-ով, իսկ 2005թ. երկրորդ կիսամյակի համեմատ՝ 75.6%-ով:

2006թ. առաջին կիսամյակում հանրապետությունում վարձակալված 15460.00 հա հողերից 23.50 հա վարձակալվել են Երևանում: Մյուս մարզերում վարձակալված 15436.50 հա հողերի 95.3%-ը կամ 14710.91 հա կազմել են գյուղատնտեսական նշանակության, 40.07 հա՝ բնակավայրերի, 16.64 հա՝ արդյունաբերական օբյեկտների, 5.76 հա՝ էներգետիկայի օբյեկտների, 4.90 հա՝ անտառային, 594.50 հա՝ ընդերքօգտագործման, 0.35 հա՝ ջրային, 63.06 հա՝ հատուկ պահպանվող տարածքների, 0.30 հա՝ տրանսպորտի օբյեկտների հողեր: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Գեղարքունիքի մարզում՝ 4088.86 հա, որից 4019.44 հա՝ գյուղատնտեսական նշանակության: Համայնքների վարչական սահմաններից դուրս վարձակալվել են 8736.01 հա գյուղատնտեսական նշանակության հողեր:

Ստորև ներկայացվում է 2006թ. առաջին կիսամյակում համայնքների վարչական սահմանների ներսում և վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության գործարքների տվյալների բաշխվածությունն՝ ըստ մարզերի.

Մարզի անվանումը	Համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշ հողերի		Համայնքների վարչական սահմանների ներսում գտնվող գյուղատնտեսական նշ հողերի	
	Վարձակալության գործարքների քանակները /միավոր/	Վարձակալված հողերի մակերեսները /հա/	Վարձակալության գործարքների քանակները /միավոր/	Վարձակալված հողերի մակերեսները /հա/
Արագածոտն	17	1733.00	181	849.22
Արարատ	9	898.17	104	417.88
Արմավիր	0	0.00	59	824.84
Գեղարքունիք	49	2599.76	178	1425.40
Լոռի	3	1565.00	217	997.05
Կոտայք	8	798.00	176	602.06
Շիրակ	11	952.00	191	440.62
Սյունիք	0	0.00	71	200.95
Վայոց Ձոր	10	150.08	34	162.99
Տավուշ	2	40.00	18	53.88
Ընդամենը	109	8736.01	1226	5974.89

2006թ. առաջին կիսամյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 6027 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 10.0%-ը: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2005թ. առաջին կիսամյակի համեմատ աճել է 42.0%-ով, իսկ 2005թ. երկրորդ կիսամյակի համեմատ՝ 12.0%-ով:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /50.4%/, առանձնատների /18.7%/, հասարակական նշանակության օբյեկտների /14.0%/ և հողերի /12.0%/ նկատմամբ: Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 3142 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2005թ. առաջին կիսամյակի համեմատ աճել է 53.0%-ով, իսկ 2005թ. երկրորդ կիսամյակի համեմատ՝ 12.9%-ով:

2006թ. առաջին կիսամյակում հանրապետությունում գրավադրվել են 2088.12 հա մակերեսով հողեր, որից 13.56 հա Երևանում : Ընդ որում գրավադրված հողերի 98.4%-ը կամ 2053.99 հա-ն գյուղատնտեսական նշանակության հողեր են: Առավել մեծ մակերեսով հողեր գրավադրվել են Արմավիրի մարզում՝ 1409.67հա, որից 1409.40հա գյուղատնտեսական նշանակության հողեր են: 2006թ. առաջին կիսամյակում գրավադրման գործարքների ամսական քանակների փոփոխման շարժն ունի աճի միտում:

2006թ. առաջին կիսամյակում հանրապետությունում արձանագրվել են հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների ապապետականացման միջոցով մասնավորեցման, համապատասխանաբար 91 և 153 գործարքներ, որոնց ընդհանուր քանակն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 0.4%: 2005թ. առաջին կիսամյակի համեմատ մասնավորեցման գործարքների քանակը աճել է 71.8%-ով, իսկ 2005թ. երկրորդ կիսամյակի համեմատ՝ 57.4%-ով: 2006թ. առաջին կիսամյակում մասնավորեցման գործարքների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Գեղարքունիքում՝ 38.5%: 2006թ. առաջին կիսամյակում մասնավորեցման գործարքների ամսական քանակների փոփոխման շարժն ունի աճի միտում:

2006թ. առաջին կիսամյակում հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 10428 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքի, որոնց քանակը 2005թ. առաջին կիսամյակի համեմատ աճել է 10.1%-ով, իսկ 2005թ. երկրորդ կիսամյակի համեմատ՝ 1.6%-ով: Առաջնային գրանցումների ընդհանուր քանակն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 17.2%: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /41.7%/:

ԱԳԿՊԿ լրատվական ծառայություն